ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԼՈԲԱԼ ՑԱՆՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ՑԱՆՑ/2020/ՊՊԳՎ

ք. Երևան «06» 02 **2020թ.**

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **գլոբալ ցանցի** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **26 596 721 (քսանվեց միլիոն հինգ հարյուր իննսունվեց հազար յոթ հարյուր քսանմեկ)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրի դրույթները տարածվում են **01.01.2020թ-ից** հետո ծագած փոխադարձ պարտավորությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ոստիկանություն	«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ
ք. Երևան, Նալբանդյան 130	ք. Երևան, Կոմիտասի 36ա-22
ՀՀ Ֆինանսների նախարարության	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 1930011489910100
Հ/Հ 900021000196	ՀՎՀՀ 00095651
ՀՎՀՀ 01506025	*էլ. փոստ: tender@locator.am*
հեռ. 59-60-21	
էլ. փոստ: policetv.gnumner@mail.ru	
Վ. Մովսիսյան	Մ. Խաչատրյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/	/տնօրեն/
(ստորագրություն)	*(ստորագրություն)*
Կ.Տ	*Կ.Տ*

Հավելված 2
«26» «02» 2020թ. կնքված
N ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ՑԱՆՑ/2020/ՊՊԳՎ գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1.	32431100/2	Գլոբալ ցանց		19 947 540	26 596 721	26 596 721	26 596 721	26 596 721	26 596 721	26 596 721	26 596 721	26 596 721	26 596 721	26 596 721	**26 596 721**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900021000196
ՀՎՀՀ 01506025
հեռ. 59-60-21
էլ. փոստ: policetv.gnumner@mail.ru

Վ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ
ք. Երևան, Կոմիտասի 36ա-22
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011489910100
ՀՎՀՀ 00095651
էլ. փոստ: tender@locator.am

Ա. Խաչատրյան
/տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 1
<< 06 >> << 02 >> 2020թ կնքված
N ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ՑԱՆՑ/2020/ՊՊԳՎ գնման պայմանագրի

Տեխնիկական բնութագիր – Գնման ժամանակացույց

Ծառայության					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը
1.	32431100/2	Գլոբալ ցանց	դրամ	26 596 721	1

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	***Ավարտը***
Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	***20.03.2020թ.***

Տեղեկատվության փոխանցման և տագնապների ազդարարման կենտրոնացված համակարգ (Գլոբալ ցանց)

Համակարգին ներկայացվող ընդհանուր պահանջներ

- Այն իրենից պետք է ներկայացնի ծրագրային փաթեթից և տվյալների հաղորդման սարքերից բաղկացած ամբողջական համակարգ:
- Համակարգի աշխատանքային ռեժիմը շուրջօրյա՝ 7/24:
- Պահպանվող օբյեկտներում տեղադրված ազդարարման համակարգերից ստացվող տվյալների հավաքագրման և հաղորդման նպատակով պետք է օգտագործվեն լրացուցիչ (միջանկյալ) սարքեր, որոնք կկարողանան միանալ տվյալ ազդարարման համակարգին, նրանից ստանալ և կենտրոնական սերվերին հաղորդել տվյալներ, ընդ որում նշված գործընթացը չպետք է խաթարի ազդարարման համակարգի բնականոն աշխատանքը:
- Համակարգը պետք է ունենա առանձին (կենտրոնական) սերվեր, որում տեղադրված կլինի ծրագրային փաթեթը և կպահվի տվյալների բազան:
- Սերվերը պետք է տեղադրվի ՊՊԳՎ–ի կողմից տրամադրված հատուկ տարածքում:
- Ծրագրային համակարգը և քարտեզը պետք է մշակված լինեն մասնակցի կողմից. հակառակ դեպքում մասնակիցը պետք է ունենա արտադրողի կողմից տվյալ համակարգով վերոնշյալ ծառայությունը մատուցելու, համակարգում փոփոխություններ կատարելու հնարավորություն և իրավունք (լիազորություն) ՊՊԳՎ-ում գործող այլ ծրագրային համակարգերի հետ ինտեգրման նպատակով:
- Համակարգը պետք է ինտեգրվի ՊՊԳՎ-ում գործող մեքենաների GPS վերահսկման համակարգի հետ, որպեսզի հիմնական ծրագրային համակարգում աշխատեն երեք ֆունկցիաներ՝
    - բռնող խմբերի մեքենաների և պահպանվող օբյեկտների ցուցադրում նույն քարտեզի վրա (հիմնական համակարգում)
    - օպերատորի կողմից տագնապ ազդանշանը այլ բռնող խմբի հանձնելու դեպքում համակարգը ավտոմատ որոշի և օպերատորին ցուցադրի օբյեկտին ամենամոտ բռնող խմբերի ցանկը՝ ըստ գտնվելու հեռավորության
    - յուրաքանչյուր տագնապին արձագանքելու դեպքի համար ավտոմատ հաշվի բռնող խմբի տեղ հասնելու ժամանակը:

GPS վերահսկման համակարգի հետ ինտեգրման համար անհրաժեշտ հավելվածի ծրագրային ինտերֆեյսի (API)-ի ծրագրային կոդերը և նկարագիրը ՊՊԳ վարչության կողմից կտրամադրվի պայմանագրով կատարող կողմ հանդիսացող կազմակերպությանը, վերջինիս պահանջի օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Հիմնական համակարգը և Android ծրագրային հավելվածը պարտադիր պետք է ունենան հայերեն լեզվով միջերես (interface):

- Համակարգը պետք է ունենա առնվազն 5 տարի տվյալների պահպանման հնարավորություն:

Համակարգի կառուցվածքը

Համակարգը պետք է կազմված լինի հետևյալ մասերից՝

Վեբ հենքով ծրագրային փաթեթ (Հիմնական համակարգ)

- Android ծրագրային հավելված նախատեսված բռնող խմբերի համար /ՊՊԳՎ-ում առկա սարքավորումները աշխատում են Android ծրագրերով/
- Համակարգին միացվող միջանկյալ օբյեկտային սարքեր
- Սերվերներ
- Մինի ԱՀԿ
- Համակարգիչներ մոնիտորներով

Ընդհանուր ֆունկցիոնալ պահանջներ

- Համակարգը պետք է պահպանվող օբյեկտներում տեղադրված (գործող) ազդարարման սարքերից ստացված ազդանշանները հաղորդի պահպանության ծառայությանը:
- Համակարգում պետք է տարանջատվի երեք տեսակի ծանուցում՝

  Տեղեկատվություն.

    Դրվեց Պահպանության

    Հանվեց Պահպանությունից

  Զգուշացում.

    Հոսանքազրկում

    Ռեժիմի խախտում

    Կապի Խափանում (մինչև 3 րոպե ժամանակահատված)

    Մարտկոցի լիցքաթափում (մոտ է լարման սահմանային արժեքին)

  Տագնապ.

    Ընդհանուր Տագնապ (պարագծային պահպանություն)

    Լուռ Տագնապ (տագնապի ոտնյակ, սեղմակ)

    Լուռ Տագնապ 2 (տագնապի ոտնյակների 2-րդ խմբի առկայության դեպքում)

    Ընդհանուր Տագնապ 2 (2-րդ գոտու առկայության դեպքում)

    Կապի Խզում (3 րոպե և ավելի ժամանակահատված)

    Մարտկոցի Լիցքաթափում (լարման սահմանային արժեք)

- Կապի, էլեկտրասնուցման խափանման և մարտկոցի լիցքաթափման դեպքում համակարգը պետք է տա հատուկ ազդանշան, ընդ որում դրանց գեներացման ժամանակային և լարման սահմանային արժեքները պետք է հնարավոր լինի սահմանել համակարգի միջոցով:
- Պահպանվող օբյեկտի ազդարարման սարքից "տագնապ" ազդանշան ստանալու դեպքում համակարգը պետք է անհապաղ ազդարարի այն և ծրագրի, և° ծրագրային հավելվածի միջոցով: Ծրագրի միջոցով "տագնապ" ազդարարելու դեպքում ինչպես քարտեզի վրա այնպեսել առանձին աղյուսակով պետք է ցուցադրվի տվյալ օբյեկտը և վերջինիս վերաբերվող ողջ ինֆորմացիան ձայնային ազդանշանի ուղեկցությամբ: Եթե օբյեկտի ազդարարման սարքը հնարավորություն է տալիս որոշել, թե պահպանության որ գոտուց է ազդարարվել "տագնապ" ազդանշանը, ապա համակարգը նույնպես պետք է ցուցադրի "տագնապ"-ի ազդարարման գոտին: Ստացված "Տագնապ"-ի ազդարարումը սերվերը միաժամանակ ուղարկում է՝ համապատասխան օպերատորի, տարածքային

պահպանության բաժնի (ոստիկանության հերթապահ մասի) համակարգիչներին և բռնող խմբերին:

- Համակարգը պետք է իրականացնի պահպանվող օբյեկտներից տվյալների առցանց հավաքագրում և պահպանում կենտրոնացված տվյալների բազայում: Տվյալների հավաքագրումը և պահպանումը պետք է իրականացվի նախապես սահմանված ժամանակային միջակայքով:
- Ծրագրի շահագործման ընթացքում չպետք է առաջանա լրացուցիչ (վճարովի) ծրագրերի ձեռքբերման անհրաժեշտություն:

Ծրագրային փաթեթին ներկայացվող պահանջներ

Ծրագրային փաթեթը պետք է կազմված լինի ստորև թվարկված մասերից, որոնք պետք է աշխատեն որպես մեկ ամբողջական ծրագրային համակարգ

- Հիմնական համակարգ (Վեբ հենքով ծրագրային փաթեթ)
- Բռնող խմբերի ծրագրային հավելված (Android)
- Մինի ԱՀԿ-ի ծրագրային ապահովում

Հիմնական համակարգը պետք է լինի WEB հենքով, կլիենտ-սերվերային սկզբունքով, իսկ որպես տվյալների բազա՝ պետք է օգտագործվեն բաց (անվճար) համակարգեր:

Ծրագրային փաթեթը պետք է ունենա՝

- Նույն էլեկտրոնային քարտեզի վրա պահպանվող օբյեկտների, պահպանության բաժինների, բռնող խմբերի (մեքենաների) աշխարհագրական դիրքի առցանց ցուցադրման հնարավորություն:
- Օպերատորի կողմից տագնապը այլ բռնող խմբի հանձնելու հնարավորություն, ընդ որում համակարգը պետք է ավտոմատ որոշի և օպերատորին ցուցադրի օբյեկտին ամենամոտ գտնվող բռնող խմբերի ցանկը՝ ըստ գտնվելու հեռավորության:
- Յուրաքանչյուր տագնապին արձագանքելու դեպքի համար բռնող խմբի տեղ հասնելու ժամանակը ավտոմատ հաշվելու հնարավորություն՝ հիմք ընդունելով մեքենայի կոորդինատները և տագնապի ստացման ժամը:
- Որպես քարտեզ պետք է հնարավոր լինի ընտրել google maps, google satellite, openstreetmap քարտեզները:
- Յուրաքանչյուր պահպանության բաժնի (ոստիկանության հերթապահ մասի) համար իր կողմից պահպանվող օբյեկտների ցանկի կամ ադմինիստրատորի կողմից ըստ անհրաժեշտության ընտրված օբյեկտների խմբի ցուցադրման հնարավորություն:
- Պահպանվող օբյեկտների կարգավիճակների ցուցադրման հնարավորություն քարտեզի վրա տեղադրված պահպանվող օբյեկտների նշապատկերների գունային ազդանշանների միջոցով
- Յուրաքանչյուր օբյեկտից ստացվող յուրաքանչյուր պարամետրի համար առավելագույն և նվազագույն շեմերի սահմանման հնարավորություն:
- բազայում առկա տվյալների հիման վրա հաշվետվությունների դիտման և արտաբերման հնարավորություն:
- Յուրաքանչյուր օբյեկտի մակարդակով առանձնացված հաշվետվությունների արտաբերման հնարավորություն:
- Պահպանվող օբյեկտները հիերարխիկ ցանկի տեսքով ցուցադրելու հնարավորություն:
- Քարտեզի վրա ցանկացած օբյեկտի փնտրման պարզեցված գործիք, այսինքն՝ ըստ անունի, թվային գաղտնագրի փնտրման հնարավորություն:
- Ստացված տագնապների ցանկի ցուցադրման և դրանց հետագա ֆիլտրման և արխիվացման հնարավորություն:
- Ստացված տագնապների պատմության ցուցադրման հնարավորություն:
- Excel ֆորմատով տվյալներ արտահանելու հնարավորություն:
- Էլեկտրոնային քարտեզի վրա օբյեկտ ընտրելու և այդ օբյեկտի վերաբերյալ առցանց ստացվող տվյալները տեսնելու հնարավորություն:
- Տագնապի ազդանշան ստանալու պահից մինչև անձնակազմի դեպքի վայր հասնելու ժամանակահատվածի ավտոմատ որոշման հնարավորություն:

- Ծրագրային մակարդակով պարտավորությունների և իրավասությունների հիերարխիկ բաժանման հնարավորություն:
- Յուրաքանչյուր օբյեկտից ստացված բոլոր տվյալների ցուցադրման, մշակման և սահմանված շեմերի հետ համեմատման հնարավորություն:
- Յուրաքանչյուր օբյեկտից ստացված և բազայում գրանցված տվյալների հետագա դիտման և ֆիլտրման հնարավորություն:
- Սերվերի կապի առկայության անընդմեջ ստուգում և կապի խափանման դեպքերի գրանցում
- Սարքերի փոխարինման և դրանց հետ կատարված գործողությունների գրանցում (լոգավորում)
- Տարբեր լիազորություններով օգտատերերի ստեղծման և հետագայում դրանց խմբագրման հնարավորություն:
- Ծրագիրը պետք է ունենա օգտատերերի՝ համակարգ մուտք գործելու էլեկտրոնային գրանցամատյան:
- համակարգ մուտք գործելու հնարավորության սահմանափակում՝ըստ IP հասցեների՝ յուրաքանչյուր օգտատիրոջ համար:
- Յուրաքանչյուր տագնապի համար մանրամասն տվյալների գրանցում և պահպանում ներառյալ՝ տագնապի գեներացման և ստացման ժամերը, բռնող խմբերի ցանկը
    - որոնց ուղարկվել է
    - որոնք ստացել են
    - որոնք մերժել են
    - որոնք ընդունել են

բռնող խմբի տեղ հասնելու ժամանակ (ավտոմատ կերպով որոշվող) և այլն:
Տվյալների հետ պետք է պահպանվեն նաև դրանց գրանցման ժամերը:

- Բռնող խմբերի պլանշետների կապի մեջ լինելու (online) անընդմեջ մոնիթորինգ և կապից դուրս լինելու ժամերի պատմության և պատճառի պահպանում

<u>Ավտոմատ հեռախոսակայան</u>

Տնտեսվարողի հեռախոսազնգերի ինքնապատասխանող կայան / սերվեր , որը համակարգի ադմինիստրատորի կողմից տվյալ օբյեկտին նախապես կցված հեռախոսահամարներից զագելու դեպքում տեղեկատվություն կտա կենտրոնական սերվերի կողմից տվյալ պահին այդ օբյետի "պահպանության դրված"/"Պահպանությունից հանված" լինելու մասին:

- Ստացված հեռախոսազագերը պատմությունը պետք է պահպանվի՝ հետագայում ըստ օբյեկտների, ժամանակահատվածի և այլն, դրանց ֆիլտրման և դիտման հհնարավորությամբ:
- Բազմուղի հեռախոսահամար, առնվազն 16 զանգ միաժամանակ սպասարկելու հնարավորությամբ:

<u>Բռնող խմբերի հավելվածի ինտերֆեյս</u>

- Բռնող խմբերը պետք է կարողանան ընդունել կամ մերժել ստացված տագնապը, առանձնացված տեսնել ստացված տագնապների ցանկը, իրենց կողմից ընդունված տագնապների ցանկը: Տեսնել օբյեկտի և իրենց դիրքը նույն քարտեզի վրա: Տեսնել իրենց պլաշետի և սերվերի միջև կապի առկայությունը, պարբերաբար կատարվող ավտոմատ հարցումների միջոցով:

Համակարգը պետք է աշխատի HTTPS անվտանգ ռեժիմով մուտք գործելու համակարգով և TLS v1.2 կամ ավելի նոր տարբերակով կոդավորմամբ:
Ծրագիրը պետք է ունենա օգտվողին հարմար ինտերֆեյս:

Տվյալների հաղորդման սարքին ներկայացվող պահանջներ

- Սարքը պետք է ունենա մինչև 4 թվային մուտք՝ պահպանվող օբյետի պահպանության համակարգին միանալու և անհրաժեշտ տեղեկատվությունները ստանալու համար:
- Որպես կապի միջոց պետք է կիրառվի GSM/GPRS և GSM/SMS:
- Սարքը պետք է ունենա 2 SIM քարտերով աշխատելու և ավտոմատ փոխանջատման հնարավորություն, ընդ որում յուրաքանչյուր սարքում պետք է տեղադրվեն երկու տարբեր օպերատորների SIM քարտեր:

- Սարքի սնուցումը պետք է իրականացվի առանձին 220/12Վ հաստատուն լարումով և ունենա պահեստային մարտկոց՝ ապահովելով առնվազն 24 ժամ անխափան աշխատունակություն:
- Սարքը պետք է թույլ տա սահմանել տվյալների փոխանցման կամայական ժամանակային միջակայք:
- Սարքը պետք է ունենա ծրագրավորման հնարավորություն, որի միջոցով հնարավոր կլինի սահմանել ազդարարման տարատեսակ ալգորիթմներ:
- Սարքը պետք է նախագծված լինի այնպես, որ կարողանա աշխատել նաև ազդարարման համակարգի սնուցման 12 Վ մարտկոցով:
- Սարքը պետք է նախագծված լինի այնպես, որ կարողանա միանալ ցանկացած տեսակի ազդարարման համակարգերի, որոնք տողադրված են պահպանվող օբյեկտներում:
- Սարքը պետք է կարողանա օբյեկտի պահպանության համակարգից միաժամանակ ստանալ և հաղորդել առնվազն հինգ տեսակի տվյալներ:
- Սարքը առցանց ռեժիմում պետք է ցույց տա GSM ազդանշանի ուժգնության մակարդակի և մարտկոցի լարման վերաբերյալ տվյալներ:
- Սարքը պետք է ունենա «վերցված է պահպանության սերվերի կողմից» տեղեկատվությունը հաստատող լուսային ցուցիչ, որը մատակարարը սարքի տեղադրման և կարգավորման աշխատանքները կատարելուց պետք է տեղադրի տնտեսվարող մարմնի համար տեսանելի տեղում: Լուսային ցուցիչը պետք է վառվի միայն սերվերի կողմից պահպանության վերցնելու հաստատումից հետո:
- Սարքը պետք է ունենա SMS ով անջատելու (միացնելու) հնարավորություն

Համակարգի տեղադրմանը ներկայացվող պահանջներ

Համակարգի տեղադրման ընթացքում մատակարարը պետք է իր ուժերով իրականացնի իր կողմից տրամադրվող սարքավորումների տեղադրման և կարգավորման աշխատանքներ: Համապատասխան աշխատակիցներին կտրամադրվի մուտքի իրավունք, կենտրոնական և առանձին պահպանության բաժանմունքներ, որտեղ պետք է իրականացվեն ծրագրի տեղադրման և կարգավորման աշխատանքներ:
Անվտանգության նկատառումներից ելնելով անհրաժեշտ է ԱՀԿ-ի ծրագրային մասը տեղադրվի առանձին սերվերի վրա և հիմնական ծրագրային փաթեթի հետ աշխատի հավելվածի ծրագրային ինտերֆեյսով (API):

Մատակարարը ծառայության տրամադրման ողջ ընթացքում պետք է իր միջոցներով ապահովի ՊՊԳՎ կենտրոնացված մոնիտորինգային և կառավարման կենտրոնի տեխնիկական համալրումը:

Բոլոր օբյեկտներում տեղադրված միջանկյալ սարքերի 2 SIM քարտերի, բոնող խմբերի պլանշետների (առանց արագության սահմանափակման շուրջ 100 հատ) SIM քարտերի, ավտոմատ հեռախոսակայանի հեռախոսահամարի կապի ծառայության ձեռքբերումը և վճարները կատարվում են մատակարարի կողմից:

Ծառայությունը պետք է մատուցվի պահպանվող 3380 օբյեկտներում: Կանխատեսվում է մինչև 50 պայմանգրի կնքում (լուծում):

Անհրաժեշտ սարքավորումների ցանկ.

Հ/	Սարքավորում	Բնութագիր (նվազագույն պարամետրեր) կամ համարժեք	Քանակ
1	Սերվեր հիմնական	CPU Intel Core I7-4790 LGA1150 MB Gigabyte H81M-S1 v2.1 RAM 8192MB DDR3-1600 - AMD RAM 8192MB DDR3-1600 - AMD HDD 500GB Seagate ST500DM002 SATA HDD 500GB Seagate ST500DM002 SATA PSU Gembird CCC-PSU5-12 450w Case Cooler Master Force 251 UPS SMT1500I 3S1931X12126	1

2	Սերվեր ԱՀԿ	CPU Intel Pentium Dual Core E5800 LGA775 MB Gigabyte G41MT-S2 v1.3 RAM 2048MB DDR3-1333 - Kingston ValueRAM CL9 RAM 2048MB DDR3-1333 - Kingston ValueRAM CL9 HDD 500GB Seagate ST500DM002 SATA Case Invander C06/436 UPS APC BC650-RS	1
3	Համակարգիչներ	CPU Intel Pentium Dual Core G3220 LGA1150 MB ASUS B85M-G RAM 8192MB DDR3-1600 - AMD HDD 500GB Seagate ST500DM002 SATA PSU Gembird CCC-PSU5-12 450w Case Cooler Master Force 251 UPS APC BC650-RS Monitor Philips 233V5LHAB 23" Monitor Philips 243V5LHSB 23.6"	4
4	Հեռուստացույց	60 դույմ անկյունագծով	2

Անհրաժեշտ անձնակազմ

Աշխատանքի նկարագիր	Մասնագետ	Նվազագույն քանակ	
Համակարգի ներդրման աշխատանքների ղեկավարում	Նախագծի ղեկավար	1 հոգի	Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ տվյալ ոլորտում
Անհրաժեշտ ծրագրային փոփոխությունների իրականացում և ինտեգրում այլ համակարգերի հետ	Ծրագրավորող	2 հոգի	Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ տվյալ ոլորտում
Սպասարկման և տեխնիկական աջակցության աշխատանքներ՝ 7/24 ռեժիմով	Ճարտարագետ	2 հոգի	Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ տվյալ ոլորտում
Համակարգի տեղադրման աշխատանքներ	Ճարտարագետ /Տեխնիկ	8 հոգի	Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ տվյալ ոլորտում
ՊՊԳՎ անձնակազմի վերապատրաստման և ուսուցման աշխատանքներ	Տեխնիկ/օպերատոր	2 հոգի	Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ տվյալ ոլորտում

Ուսուցում

Մատակարարը պետք է իրականացնի համապատասխան անձնակազմի ուսուցում՝ կազմված տեսական և գործնական պարապմունքներից: Տեսական պարապմունքների ընթացքում ՊՊԳ վարչության համապատասխան աշխատակիցներին պետք է ներկայացվեն համակարգի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը: Գործնական պարապմունքների ընթացքում ՊՊԳ վարչության աշխատակիցները պետք է աշխատեն ծրագրով և կատարեն կոնկրետ առաջադրանքներ:

Երաշխիք

Մատակարարը ծառայության տրամադրման ողջ ընթացքում պետք է իրականացնի ծրագրային փաթեթի և սարքերի անվճար երաշխիքային սպասարկում: Առաջացած խնդիրներն ու անսարքությունները մատակարարը պետք է վերացնի տեղում իր միջոցներով:

Համակարգի ընթացիկ սպասարկման պայմաններ

Պատվիրատուի կողմից օբյեկտներում տեղադրված տվյալների հաղորդման սարքերի անսարքության/խափանման հայտնաբերման դեպքում պատվիրատուն էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մատակարարին առկա խնդրի մասին, որից հետո մատակարարը պետք է ձեռնարկի միջոցներ հայտնաբերված թերությունները վերացնելու նպատակով՝ ք. Երևանի տարածքում մեկ, իսկ մարզերում երեք ժամվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ոստիկանություն ք. Երևան, Նալբանդյան 130 ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900021000196 ՀՎՀՀ 01506025 հեռ. 59-60-21 Էլ. փոստ: policetv.gnumner@mail.ru	«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ ք. Երևան, Կոմիտասի 36ա-22 «Կոնվերս բանկ» ՓԲԸ Հ/Հ 1930011489910100 ՀՎՀՀ 00095651 Էլ. փոստ: tender@locator.am
Վ. Մովսիսյան /ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/ (ստորագրություն) Կ.Տ	Ա. Խաչատրյան /տնօրեն/ (ստորագրություն) Կ.Տ

Հավելված 3.1
« » 2020 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրիարդյունքըԳնորդինհանձնելուփաստըֆիքսելուվերաբերյալ

Սույնով արձանագրվումէ, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդիանվանումը Վաճառողիանվանումը
(այսուհետ՝ Վաճառող)միջև 20 թ. _____ -ին կնքված N_____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ապրանքի		
անվանումը	չափմանմիավորը	քանակը (փաստացի)

Սույնակտըկազմված է 2 օրինակից, յուրաքանչյուրկողմինտրամադրվում է մեկականօրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց
հայտընախագծածներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

գտնվելուվայրը _____ գտնվելուվայրը _____
հհ _____ հհ_____
հվհհ _____ հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՏԴՐԱՄԻՄԱՍԻԿԱՏԱՐՄԱՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրիհամարը՝ _____

ՊատվիրատունՊայմանագրիկողմը՝հիմքընդունելովպայմանագրիկատարմանվերաբերյալ « » « » 20 թ. դուրսգրված N _____հաշիվապրանքագիրը, կազմեցինսույնարձանագրությունը հետևյալիմասին.

ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրիկողմըկատարելէհետևյալաշխատանքները, կամմատուցելէհետևյալծառայությունները, կամմատակարարելէհետևյալապրանքները՝

Մատակարարվածապրանքների, կատարվածաշխատանքների, մատուցվածծառայությունների

ՐԱ-	քանակականցուցանիշը		կատարմանժամկետը		Վճարման /հա
	ըստպայմանագրովհաստատվածգնմանժամանակացույցի	փաստացի	ըստպայմանագրովհաստատվածգնմանժամանակացույցի	փաստացի	

Սույնարձանագրությաներկկողմհաստատմանհամարհիմքհանդիսացածհաշիվապրանքագիրըևդրականեզրակացությունըհանդիսանումենսույնարձանագրությանբաղկացուցիչմասնկցվումեն:

Ծառայությունըհանձնեց Ծառայությունըընդունեց

_____ _____
ստորագրություն ստորագրություն

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն
Կ.Տ. Կ.Տ.